

ւանդ վերջին տարիներս՝ իրենց դատողական գիտութեանց և տեղա՛յան պարզուկ արուեստգիտութեանց վրայ աւելցուցած են վաճառական ժրութիւն մըն ալ գործնական, զոր սերունդ մը առաջ գրեթէ բնաւ չունէին։ Իր հին աւանդական բեղուն բարեմասնութիւնները տակաւ թօթուող մերկացող Հայն ալ՝ փոխան օրինակելու Եւրոպայի ժողովուրդներուն աւելորդ գիտութիւններն ու վարելակերպն՝ եթէ ջանայ նմանիլ տեղացի այս Յունաց փափուկ ճարպիկութեանց և ջերմեռանդն հա՛մերաշխութեանց, Հրէից տոկուն և մանրահաշիւ գործունէութեանց, թուրքաց պարզ և ուղղա՛րիտ կենցաղին՝ լաւագոյն և հաստատագոյն բան մը ըրած կըլլայ կարծենք. « Լաւագո՛յն է անմիտն և իմաստնագոյն՝ ի տան իւրում քան իմաստունն ի տան այլում » . ասո՛նք մե՛ր տունին մե՛ր հրապարակին մարդի՛կն են . ասոնք եւրոպացի՛ն աղէկ գիտեն մեր գործատեաններուն պարտն ու պատշաճը։ Պէտք է ասո՛նց նմանիլ։

Վաճառականութեան պարապող անձանց պարտ է նաեւ չըստասել կեանքի վախճանին՝ գործէ քաշուելու համար. պա՛րտ ու բանաւո՛ր ալ է՝ գէթ 60էն ետք՝ քաշուիլ գործէ, և հաւատարիմ ստորագրելոց յաջորդաց կամ որդւոց յանձնելով զայն՝ տալ զինքն աւելի՛ աղանուական ձրի գործերու, աւելի՛ կեանքի պտղաբերութեանց. ու այսպէս շարժողներն՝ աւելի՛ բարեբաղդ եղած են քան անոնք՝ որ մինչև վերջը Մամոնայի ջերմ պաշտօնեայ՝ Մամոնայի աղմկալից սրահներու մէջ աւանդած են իրենց հոգին՝ ոչ այնքան արժանի երկարակեցութեան։ Խաչիկ և Յարութիւն Քափամաճեան, Մանուկ Սմբատեան, Սենեքերիմ Մանուկեան, Յովհաննէս Յակոբեան ու նմանիք աւելի՛ իմաստութիւն ցուցած են այս կողմէն՝ քան միւս հին թուրքահայ վաճառականք. ծերութիւնն ալ՝ ըլլայ միջակ ունեւորութեամբ՝ հարս-